ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ա. ԽԱՂԻԿՆԵՐ

1(266)

Ծառի տակը մանուշակ,
Ջան գյուլում, ջան, ջան,
Ես, տու մտնենք մի փչակ,
Մինչև ճաշը կրկչանք,
Ճաշից եղը քչփչանք:

2(267)

Սիրել եմ, սերն ա վրեն,
Ռեհանի թերն ա վրեն,
Ով իմ սիրածն ինձ չտա,
Աստծու կրակը նրա վրեն:
Սիրել եմ, առնիլ դեմ,
Որ առնեմ ոչ՝ մեռնիլ դեմ:

3(268)

Չափար բասմա կոխիլ մի,
Շահին դալը ա, փոխիլ մի,
Էտ յարն իմն ա, խափիլ մի,
Ջիբը՝ լիգը, թափիլ մի:

4(269)

Մեր բաղի դուռը բաց ա,
Ոտները շաղով բաց ա.
Այ աման, սև աչեր, ի՞նչ անեմ,
Չէ որ դու ասիր՝ քեզ կառնեմ:

5(270)

Ծաղիկ եմ քաղել նարնջի,
Ա՛ տղա, վեր արի փնջի,
Ես քու հորը՝ հարսնացու,
Դուն իմ մորը՝ փեսացու:

6(271)

Կարմիր կովը՝ մսացու,
Տեղին չիթը՝ քիսացու,
Ես քու դեդուն՝ հարսնացու,
Դու իմ դեդուն՝ փեսացու:

7(272)

Այ, նուրի, նուրի,
Բոյըտ՝ բարդի՝ չինարի,
Չաքմեքը՝ չամադանի,
Փափախը՝ սովդաքաշրի:

8(273)

Մատուցս կա մատանի,
Ակը՝ վառ-վառ ծիրանի,
Արի քյնանք դիվանի,
Ով նասիբ, նա տանի:

9(274)

Տուն եմ սրփել փողոց-փողոց,
Կյլուխս խրել եմ ալվանա քորոց,
Ով որ քու վադը ասի,
Նա ոչ տենա լիքը ըրօրոց:

10(275)

Գյուլում, գյուլում, գյուլչեչակ,
Ես, տու մտնենք մի փչակ,
Չքել ճաշը կրկըչանք,
Ճաշեն եդը քչփչանք:

11(276)

Ծաղիկ եմ քաղել նարնջի,
Ա՛ տղա, վեր արի փնջի,
Իմ մերը քեզ ախճիկ չի տա,
Խաս մանեթը կաշառք չի տա:

12(277)

Ժամիս պատը ղամիշ ա,
Մեչը լիքը եմիշ ա,
Ախպեր, խաթրիտ չեմ մնա:
……

13(278)

Քանզեն ջան, գյուղը մտնես,
Ջան գյուլում, ջան գյուլում,
Իմ քցած տեղը մտնես,
Ջան գյուլում, ջան գյուլում,
Ինձանից գյուման յար բռնես
Ջան գյուլում, ջան գյուլում,
Բեմըրվաթ հողը մտնես,
Ջան գյուլում, ջան գյուլում:

14(279)

Ծաղիկ եմ քաղել, ղեղին ա,
Իմ յարը ծեր գեղին ա:
Հելու ու մեխակ շատ ունեմ,
Հրեն յարիս ձեռին ա:

15(280)

Կաքավը լի ըլավ քարին,
Կտուցը՝ լիքը արին,
Վախըմ եմ ղարիբ տեղ մեռնեմ,
Ո՛չ ասկ ունեմ, ո՛չ արին:

16(281)

Մտիկ արեք էն ղազին,
Տըպտըպուտրիկ բողազին,
Ա՛յ մերա, քեզ ի՞նչ արի,
Որ ինձ տվիր ղամմազին:

17(282)

Ես չոբան եմ, շուն չունեմ,
Էս կեղըմը ի՞նչ ունեմ,
Տուն եմ շինել ճաղերով,
Վանրթ եմ քաղել մաղերով[1]

18(283)

Տեղ եմ տըրել, տալ չեմ,
Ինձ ու կլխու դիվան չեմ,
Տանակ պերեք մորթեցեք,
Ես էն տղին հավան չեմ:

19(284)

Գյուլում, գյուլում, գյուլ չըչակ,
Ես, տու մտնենք մի փիչակ,
Մչկել ճաշը քըչփըչանք,
Ճաշից եդը կըրկըչանք:

---

[1] Այս և հաջորդ երկու խաղիկների մեջ բանասացը յուրաքանչյուր տողից հետո կրկնում է. «Ջան գյուլում, ջան, ջան», որը արտագրելիս բաց եմ թողել (ծանոթ բանահավաքի):

20(285)

Ծիրանի ծառ, գիլասի,
Յընգերտինք ջան, աստված կանչեք՝
Իմ յարը հասնի իրան մուրազին:

21(286)

Այ ալին, ալին, տղա,
Քյա̈քյու̈լըտ ղալին, տղա,
Քե որդի՞ սիրեցի,
Իմ հերանց կալին, տղա:

22(287)

Կաղնել ես կարմընջըմը,
Փաքաքվել ես չեկ յարի յափնջըմը:

23(288)

Ծիրանի ծառ, գիլասի,
Քըշերն էկավ էրազի,
Քըշերվա փող, փախճող ախճիկ,
Յետիտ հընգերը ես եմ:
Ալ լուսնյակը ես եմ,
Յետիտ հընգերը ես եմ:

24(289)

Ալվան ծաղիկ եմ մի տանից,
Աշխարից ոչինչ չեմ տանի,
Տու̈ ես իմ սրտի սիրածը,
Քեզանից լավը չեմ ճարիլ:

25(290)

Ոչխարըտ պըրթոտել ա,
Շորերըտ կեխտոտել ա,
Ա՛ տղա, քու մերը մեռնի,
Ծիրանի ծառ, գիլասի, քըշերը տուն արի:

26(291)

Կըտրովըս քոչ ա քյնըմ,
Քոչը քոչի մեչ ա քյնըմ,
Էռնակ էն քվորը, որ
Օխտն ախպոր մեչ ա քյնըմ:

27(**292**)

Բոզ ծիյուն նալն ի՞նչ կանի,
Սուրունին խալն ի՞նչ կանի:
Սիրել եմ, տանիլ դեմ,
Միչի ղըլմըղալն ի՞նչ կանի:

28(293)

Բաղըմս կա բաղմանչի,
Շնը շնին նման չի,
Թաղ ու թառակ տու̈ս տա̈ռա̈նք,
Մեկն էլ ա իմ յարին նման չի:

29(**294**)

Ախչի, արի քյնա̈նք դիվանի,
Ով շառ անի, նա կտանի:

30(**295**)

Դես խտորը հանդեր ա, {2}
Ճալեն տու̈ս էրծաթա բանդեր ա, {2}
Կտոր-կտոր վարել եմ,
Մի սիրուն ախճիկ ճարել եմ,
Ինքը սուրուն նենած էր[1],
Կյաթեն ծոցին տրել էր:

31(**296**)

Ծու̈րերն ը վեր ծնիփակ,
Շըղըկոլոլ ըրեքնակ,
Ըրեքնակին տեր, ախպեր,

[1] Նենած էր – քնած էր (ծանոթ. բանասացի):

Շաքար մաղեմ կեր, ախպեր:
Տրբ.՝ 1-ին տողում՝ *Ծորերն ը տուս ծընիփակ*

32(297)

Գյուլում կասեմ վիլոլո,
Հարքի վիճակ վիլոլո,
Ջան գյուլում ջան, ջան,
Ջան ծաղիկ ջան, ջան:

33(298)

Ծորերն ը վեր ճուր ա քյնըմ,
էն տղեն ո՞ւր ա քյնըմ,
Ջան գյուլում ջան, ջան
Ջան ծաղիկ ջան, ջան:

34(299)

Այ հետիտ եմ, հետիտ եմ,
Ջաքմա չըրըխկ ոտիտ եմ,
Փունջ մընիշակ ծոցիտ եմ,
Ալա խնձոր թաթիտ եմ:

35(300)

Կուրտիկ ունեմ տեղին ա,
Իմ յարը ծեր կեղին ա:

36(301)

Արի քյնանք դիվանի,
Ակն ու վարթը ծիրանի,
Ով զոռ անի, նա տանի:

37(302)

Այ յալ կըտամ, յալ կըտամ,
Միչկովըս քիրման շալ կըտամ,
Գյանջու տակին ղալ կըտամ:

38(303)

Ի՞նչ անեմ նամակ,
Կէրթամ սարի քամակ:

39(304)

Գյանջու քամին կյալիս ա,
Էրա միչին տալիս ա,
Մեյդան արեք տուս եմ ըլըմ,
Սիրած յարս կյալիս ա[1]:

40(305)

Մանդր հուլունք շարել եմ,
Կուտուր-կուտուր վարել եմ,
Ջիբս եմ ածել լարել եմ,
Իմ ուզածը ճարել եմ:

41(306)

Արի քյնանք ախպրի ակը,
Ես, տու քաղենք հունի խակը,
Ակն ու վարթը ծիրանի,
Ով սիրել ա, նա տանի:

42(307)

Պանջարը տուս կկյա փալթա-փալթա,
Կիսիցը դյերը ղըրմզի վարթ ա,
Այ տղա կաղնել եմ բալկոնին,
Փըռփըռըմ ա դոշիդ մավին,
Երանի տամ քու ծոցիդ քնողին:

43(308)

Որդի քյնաս հետըտ եմ,

---

[1] Բանասաց Թամար Սառիկյանը խաղիկները երգում էր և յուրաքանչյուր տողից հետո կրկնում. «Ջան գյուլում ջան, ջան» (ծանոթ. բանահավաքի):

Չաքմա չըրըխ՝ ոտիտ եմ,
Մասրի աղլուխ՝ գոտկիտ եմ,
Փունջ մանիշակ՝ ծոցիտ եմ:

44(309)

Ակն ու վա՛րթը ծիրանի,
Արի քյնա՛նք դիվանի,
Ով սիրել ա, նա՛ տանի,
Ով սիրածը սիրածից հանի,
Նրա հոքին սատանեն տանի:

45(310)

Ախճիկը հորը հաց տարավ,
Խինձը քաղեց, դաստ արավ,
Ախճիկ տեհավ, տազ արավ,
Տղա տեհավ, հազ արավ:

46(311)

Վազան տակին նստել եմ,
Ծաղիկ քաղել փնջել եմ,
Թուխ գառը մատաղ կքաշեմ,
Որ իմ սիրածիս առնեմ:
Ով իմ սիրածն ինձանից խըլնգառի,
Նա ինձ պեսը ո՛չ տենի:

47(312)

Ժամի տուռը սրփա՛ծ ա,
Տուպիկ-տուպիկ չըթա՛ծ ա,
Նաղլ ու բալիշ քցած ա,
Խան ախպերըտ միչին թինգը տված ա,
Շաղն իրեսին տըրա՛ծ ա,
Վարթը ծեռին փռնած ա:

48(313)

Ա՛ խոզարած տղա, խոզարած տղա,
Կոճակնին շարած տղա,
Իմ նանը քեզ ախճիկ չի տալ,
Իզուր գյանքըտ մի մաշի:

49(314)

Կաքն եմ տըքցրել՝ կեծ ա,
Ոչխարիս աղաքն էծ ա,
Միչի չոբանը ալ ու պեծ ա:

50(315)

Յաց եմ թխել, քերինջ ա,
Նախրիս առաչը հերինջ ա:

51(316)

Ա՞խ եմ անըմ, արին ա կյա՛լիս,
Մեջքս քարին ա կյա՛լիս,
Մեռնում եմ ղարիբ տեղին,
Լացողս ղարիբ ա կյա՛լի:

52(317)

Ես քյնըմ եմ Մոսկով,
Ամեն յարի խոսկով,
Գիշերները բաց չիլես,
Ցիրեկներն էլ լա՛ց չիլես:

53(318)

Արի քյնա՛նք կուռնե-կուռը,
Պա՛ց կըլինի մեր բախտի տուռը,
Բախչեն ես եմ, բարը տուն ես[1],
Իմ սիրելի յարը տուն ես,
Արի քյնա՛նք սազով, դամով,
Կինին էլ խմենք ոսկու ջամով:

[1] «Տղեն ա ասըմ»,- բացատրում է բանասացը:

54(319)

Բախչիս պատը ղամիշ ա,
Ջան գյուլում ջան, ջան,
Մեչը լիգը եմիշ ա,
Ջան գյուլում ջան, ջան:
Բաղչմը ցանել եմ ռեհան,
Ջան գյուլում ջան, ջան,
Ռեհանս քաղող չկա,
Ջան գյուլում ջան, ջան, ջան:

55(320)

Գյուլում կասեմ կշարեմ,
Ջիբս կածեմ կլարեմ,
Հչքել ճաշը քչփչանք,
Ճաշեն յեղը կրկչանք[1]

56(321)

Գյուլում, գյուլում գիլասի
Ես, տու նստենք միասին,
Մինչև ճաշը կըրկըչանք.
Ճաշից եղը կչկչանք:

57(322)

Բաղիս պատը ղամիշ ա,
Մեչը լիգը եմիշ ա,
Քանի կտրեմ անուշ ա (2)
Ախպեր, խաթրիտ չեմ մնա,
Յարը քեզնից անուշ ա:
Ջան գյուլում ջան, ջան,
Ջան ծաղիկ ջան, ջան:

58(323)

Մեր տռանը՝ բարդի ծառ,
Ծեր տռանը՝ բարդի ծառ,
Ուրիշի խոսկերը դարդըտ առ,
Սիրած յարս ետ է տառ:

59(324)

Ճըրի էս կուռ, էն կուռ՝ թալա,
Մեչ տեղը ծանդր կառ ա,
Յար փըռնելը լավ պան ա,
Յետ տառնալը դարդ ու բալա:

60(325)

Բախչըմս ցանել եմ կարի,
Աստծ տու իմ դեդին տարի,
Որ ինձ տվել ա,
Էս թավուր ազնիվ յարի:

61(326)

Գյուլում կասեմ կշարեմ,
Ջիբս կածեմ կլարեմ,
Էտ տղին որդի՞ սիրեցի,
Իմ հերանց կալըմը:

62(327)

Կարմիր կովը՝ մսացու,
Տեղին ճոթը՝ քիսացու,
Ես քու մորը՝ հըրսնացու,
Տու իմ մորը՝ փեսացու:

63(328)

Ա՛ հուն տղա, հուն տղա,
Ըխպրի կլխին քուն տղա,
Ծաղիկս ճըրովն եմ քաշել,
Դե քյնա կորի, շան տղա:

[1] Բանասացը յուրաքանչյուր տողից հետո կրկնում է «Ջան գյուլում ջան, ջան» (ծանոթ. բանահավաքի):

64(329)

Ա՛ տղա, քյնա, քյնալիտ մատաղ,
Միչկիտ քյանմանին մատաղ,
Ուսովըտ ետ մի յըշիլ,
Քու սլանած յարին մատաղ:

65(330)

Գյուլում կասեմ կշարեմ,
Ձիբս կածեմ կլարեմ,
Կտուր-կտուր վարեցի,
Քեզանից լավը ճարեցի:

66(331)

Ախչի կանգնես կազ կմանես,
Արեքակին շատ նման ես,
Որ ներս մտնես, ագիզ ջան,
Շատ մարթու խելքը կտանես:

67(332)

Աղբալա քոլն ա կանաչ
Եղբայրս եկավ
Հեսկին ալ ա, ծուպը՝ կանանչ:

68(333)

Ելնեմ կտուրը յաշեմ,
Տեսամ յարս կյալիս ա,
Չոքեմ չաքմեն քաշեմ:

69(334)

Մատրմս կա մատանի,
Ակն ու վարթը՝ ծիրանի,
Արի քյնանք դիվանի,
Ում ղսմաթն ա, նա տանի:

70(335)

Պուճուր, պուճուր տներ են,
Ձան գյուլում ջան, ջան,
Մեչը ոսկի սեր են,
Ձան ծաղիկ ջան, ջան:

71(336)

Գյուլում կասեմ կշարեմ
Ձիբըս կածեմ, կըլարեմ,
Ակն ու վարթը՝ ծիրանի,
Ով շար անի, նա տանի:

72(337)

Ձափար բասմա կոխիլ մի,
Էտ յարն իմն ա, խափիլ մի,
Էտ ջիբն իմն ա, թափիլ մի,
Շահին ղալբ ա, փոխիլ մի:

73(338)

Ծաղիկ եմ քաղել նարնջի,
Ա՜յ տղա, վեր արի, փնջի՛,
Իմ նանը քեզ ախծիկ չի տա,
(Անտեղի քեզ մի տանջի):

74(339)

Սարերովը քոչ ա քյնըմ,
Քոչը քոչի մեչ ա քյնըմ,
Երանի էն քվորը,
Օխտը ախպոր մեչ ա քյնըմ:

75(340)

Տեղ եմ տրել հավան չեմ,
Ինձ ու կլխի դիվան չեմ,
Տանանակ պիրեք մորթեցեք,
Ես էն շան տղին հավան չեմ:

76(341)

Այ սարի սավոր տղա,
Մեն մենավոր, ջան տղա,
Ով որ քեզ սիրի, ա՛յ ախչիկ,
Սրտին գյուլլա դիպչի, ա՛յ տղա:

77(342)

Ախչի, անունդ Շուշան,
Շորեր ունես խշխշան,
Արի քյնանք սուրբ Նշան,
Մատանիս տամ քեզ՝ նշան:
Դուն իմ մորը՝ հարսնացու,
Ես քու մորը՝ փեսացու:

78(343)

Ոչխարի ղաքի էծը չըլեմ,
Կրակի պեծը չըլեմ,
Տան էլ մեծը չըլեմ: